

ԱՐԱՊՏԱԳԵՆ ԵՎ ՍԵԴԱՏԻՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕԺՏԱԿԱԾ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՆՀՈՂ
ԱՃԵՑՈՒՄԸ ԴԻԼԻՋԱՆԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՓՈՐՁԱԿԱՅԱՆՈՒՄ

ՀՀ ԳԱՍ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ

Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի Դիլիջանի անտառային կայանում հետազոտություններ են տարվում համապետություններում ներմուծված աղապտազեն և սեդատիվ հատկություններով օժտված մի շարք դեղաբույսերի հիդրոպոնիկ աճեցման ուղղությամբ: Կատարվում են համակողմանի ուսումնասիրություններ հետևյալ ասպեկտներով՝ կենսատեխնոլոգիաների մշակում, կենսաքիմիական և դեղաքիմիական առանձնահատկությունների վերլուծություններ և այլն:

Ստորև ներկայացվում են առավել կարևոր նշանակություն և պահանջարկ ունեցող դեղաբույսերի անհող աճեցման փորձերի նախնական ու համառոտ արդյունքները:

Կիտոռոնաթուսի չինական (*Schizandra chinensis* Baill.) - լիովին հարմարվել է Դիլիջանի անտառային բիոգեոցենոզի պայմաններին. բույսերը նորմալ աճել, ծաղկել և պտղակալել են: Սերմերի ծլունակությունը Արարատյան դաշտի պայմաններում կազմել է 70 %, իսկ սերմերից ստացված հիդրոպոնիկ բույսերի տարեկան աճը՝ 15սմ:

Էլեուտերոկոկկ փշոտ (*Eleutherococcus senticosus* Rupz et. Maxsim) - 2-3 տարեկան տնկիների մոտ երրորդ տարվանից սկսած նկատվել է հիդրոպոնիկ տնկիների բուռն աճ (տարեկան աճը՝ 40սմ, ճյուղավորությունը՝ 5 հատ) հողային նկատմամբ (32 և 4), համապատասխանաբար:

Դեղաքիմիական առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հիդրոպոնիկ պայմաններում աճեցված 7 տարեկան փշոտ էլեուտերոկոկկի արմատներում էլեուտերոզիդների գումարային պարունակությունը կազմել է 5,5%:

Ջարմանազան երկնագույն (*Polemonium coeruleum* L.) - 5-6 տարեկան բույսի բարձրությունը հասնում է 100 սմ, 26-30 ճյուղով, իսկ արմատի չոր քաշը կազմել է 105 գ՝ 2,27 % β -ամիրինին պատկանող գումարային սապոնինների պարունակությամբ: Դեղաքիմիական հետազոտությունները ցույց են տվել, որ փորձանմուշները (էքստրակտիվ նյութեր՝ 38 %, մոխիր՝ 9,8 %, խոնավություն՝ 10 %) բավարարում են ֆարմակոպեական հողվածով նախատեսված պահանջներին (20 %-ից ոչ պակաս, 13 և 14 %-ից ոչ ավել):

Արալիա մանջուրական (*Aralia mandschurica* Rupr. Et Maxsim) - Արմատակալները հարմարվել են նոր պայմաններին, սակայն աճը սկզբնական տարիներին եղել է խիստ դանդաղ: Ծաղկել են յոթ տարեկան հասակում: Արմատի չոր քաշը (50%) կազմել է 36,2գ՝ 1,67% A,B,C արալոզիդների գումարային պարունակությամբ: Հողային պայմաններում բույսերը չորացել են:

Այսպիսով, կատարված հետազոտությունները հաստատել են ուսումնասիրվող դեղաբույսերի հիդրոպոնիկ աճեցման հնարավորությունը և հեռանկարայնությունը:

S.K.Mairapetyan, R.J.Buniatyan, A.H.Tatevosyan, J. S.Alexanyan, B.T.Stepanyan, H.M.Galstyan

SOILLESS CULTURE OF ADAPTOGENE AND SEDATIVE MEDICINAL PLANTS IN DILIJAN
FOREST EXPERIMENTAL STATION

Summary

The studies have shown that in Dilijan forest experimental station the environmental conditions are quite suitable for the soilless cultivation of some sedative and adaptogene medicinal plants. They are fully adapted to new conditions performing intensive growth, regular flowering and fruiting.

The pharmacological studies have shown significant accumulation of eleutherosides (5,5% in *eleutherococcus*), total saponines from β -amirinin (2,27 in greek valerian) and A,B,C total aralosides (1,67 % in *aralia*) which are within the standard requirements according to pharmacopea.